*աւետարանաձայնի յունաց վասն հանդիսի»։ Շատ աւելի հետաքրքրականն է սակայն յաջորդը. աւետարանի լատիներէն ընթերցմանէն վերջ ծիրանաւոր սարկաւագի մը կողմէն, Հ. Ստեփան կ'առաջնորդուի Պապին մօտ, ուր յունարէն լեզուով Անոր օրհնութիւնը կը խնդրէ.*

*«Ի խնդրել յունարէն զօրհնութիւն ի պապէն, Իւլօ՛գիսօն էն. պապն կիսաժպտելով և իբր վարանելով ակնարկէր առընթերակաց խարտուիլակին, թէ զի՞նչ տացէ պատասխանի. և ըստ խորհրդոյ նորա երկրորդեաց զայն բան՝ զոր լատիներէն ասացեալ էր առ կարդինալ սարկաւագն»։*

*Այժմ կարգը Հ. Աւգերեանին է, որ կը ձայնէ.*

*«Սոֆիա օրթի էն. – և Հ. Ստեփան հանդիսաւորապէս կը սկսի կարդալ – «Է՛ք դո՞ւ գադա՛ Մադթէո՛ն, էն, այնպիսի բնական գեղգեղմամբ, մինչև ապշիլ ամենայն հանդիսականաց, որպէս այն թէ կատարեալ հոռոմ է ըստ լեզուին, որպէս և ըստ տարազու»։*

*Հ. Ստեփանի մտերիմներ որ ներկայ եղած են՝ չեն կրցած նոյն ատեն անդրադառնալ և իմանալ. ա՛յն աստիճանի նա յաջողեր է, մինչև իսկ Սրբազան Հայրապետին իսկ մեծ գոհունակութեան արժանանալով...*

*«Յաւարտ կարդացմանն-կ'ըսէ ինքն իսկ Աւգերեան Հ. Մկրտիչ – տարաւ կիսասարկաւագն Հ. Մկրտիչ զաւետարանն առ պապն, և նա յոտին կալով՝ իշտաճով ինն համբուրեաց»։*

*Ժամանակագիրը կէտ առ կէտ կը շարունակէ ապա Քահանայապետական ձայնաւորին յաջորդական ընթացքը նկարագրել, ամէն սեփական ծէսերովը, զոր ներկայացնել հոս զանց կ'ընենք։ Կը հետաքրքրէ սակայն դէպք մը, որ տեղի ունեցած է պատարագէն վերջ, երբ Պիոս Է. Քահանայապետական խոյրը դնելով՝ պատշգամէն կ'օրհնէ հրապարակին մէջ խռնուած ժողովուրդը, որոնք կը գոչեն. Կեցցէ, կեցցէ քահանայապետը.*

*«Մոռացեալք կամ անգիտացեալք ըստ սովորութեան Հռովմայ հայցել զներողութիւն, բայց դիտաւորութիւն էր նոյն, վասն որոյ և սրբազանն ընկէց ի վայր զթուղթ ներողութեան. և եղեն հնչմունք ձայնից կրկին՝ հանդերձ թնդանօթիւք էն.»։*

*Երկու Մխիթարեաններուն անունները Վենետկոյ լրագրաց մէջ ալ յատկապէս յիշատակուեր են, իբր պաշտօնական բաժին ունեցող յոյն ծիսակատարներ՝ սոյն Թագադրութեան Ձայնաւորին. իսկ ծանօթ անձինք ուրախակցութիւն յայտներ են ամէն անգամ Մխիթարեանի մը հանդիպելնուն։*

*Ըստ տեղեկագրութեան Աւգերեանի՝ կ'աւելցնենք, որ Պիոս Է. փառաւոր ձայնաւոր մ'ալ մատուցեր է նոյն տարւոյ ապրիլ 13-ին Զատկի օրը Վենետկոյ Ս. Պետրոս պատրիարքական եկեղեցւոյն մէջ, և դարձեալ հրաւիրուելով՝ միևնոյն դերերը կատարեր են Հ. Ստեփան և Հ. Մկրտիչ։*